ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ՇՎԵԴԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

21.04.2023 14:16

«Հայաստանի դատավորների կարողությունների զարգացում՝ դատական համակարգի նկատմամբ նոր ակնկալիքներին համապատասխանելու և հանրային վստահությունն ամրապնդելու նպատակով» երկարամյա ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ են այցելել Շվեդիայի ազգային դատարանների ադմինիստրացիայի ներկայացուցիչներ՝ ծրագրի ղեկավար Լյուդվիգ Բեքինգը, ծրագրի համակարգող Բյորն Լինդենը, ծրագրի երևանյան ներկայացուցիչներ Լիանա Ղազինյանը և Մարիամ Այվազյանը:

Փաստաբանների պալատում նրանց հյուրընկալել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալներ Արմեն Ասատրյանը, Հարութ Ակլունցը և նախագահի միջազգային հարաբերությունների և հանրային կապերի գծով օգնական Նանե Գրիգորյանը:

Հաշվի առնելով փաստաբանների և փաստաբանության ինստիտուտի առնչությունը ծրագրին և դրա կարևորությունը՝ քննարկվել են դատարանների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելուն ուղղված մի շարք առանցքային հարցեր:

Կողմերն ընդգծել են, որ դատական համակարգի նկատմամբ հանրային վստահությունն ամրապնդելու գործում պակաս կարևոր չէ փաստաբանների դերը՝ փաստաբանն անմիջական ազդեցություն ունի դատարանների նկատմամբ հասարակական կարծիքի ձևավորման վրա, ուստի այս առումով փաստաբանը մեծ դեր ունի դատարանների նկատմամբ վստահության ձևավորման գործում:

Փաստաբանների պալատը, շահագրգռված լինելով դատական համակարգի բարեփոխմամբ և նրա հեղինակության բարձացմամբ, իր պատրաստակամությունն է հայտնում աջակցել ծրագրին՝ ինչպես առկա իրավիճակի համապարփակ ուսումնասիրությամբ, այնպես էլ ոլորտի զարգացման համար այլ ակտիվ քայլեր ձեռնարկելով:

Հանդիպման ավարտին կողմերը շնորհակալություն են հայտնել միմյանց արդյունավետ քննարկման համար և ձեռք բերել պայմանավորվածություն՝ հետագա հանդիպումների և շարունակական համագործակցության նպատակով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })